

## “ԿՈՆՑԵՆՆ-ԴԻԱԼՈԳ” ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ

Քրեական գործերով փաստաբան

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Երկարաժամկետ, փորձաշրջանով

ՎԱՅՐԸ

Երևան, Հայաստան (Չարենցի փ., 21)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

“Կոնցենն-Դիալոգ” ՓԲԸ փնտրում է համապատասխան մասնագիտական և անձնական ունակություններով մասնագետ քրեական գործերով փաստաբանի պաշտոնի համար:

### ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Նախնական խորհրդատվություն տրամադրել գրասենյակ դիմող անձանց և վստահորդներին (ներառյալ վկային, կասկածյալին, մեղադրյալին, տուժողներին)
- Ապահովել ներկայացուցչություն մինչդատական վարույթի շրջանակներում.
- Տրամադրել իրավական խորհրդատվություն քրեական գործերով.
- Խորհրդատություն տրամադրել վկաներին և ուղեկցել վարույթի շրջանակներում
- Ապահովել մեղադրյալի և ամբաստանյալի պաշտպանությունը դատարանում
- Բողոքարկել դատական ակտեր, պատրաստել միջնորդություններ, դիմումներ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր.
- Մշակել դատավարության ռազմավարություն և զբաղվել ռազմավարական հարցերով.
- Հարուցել քաղաքացիական հայցեր քրեական վարույթների շրջանակներում:
- Իրականացնել քրեական իրավունքի և դատավարության հարցերով համեմատական հետազոտություններ, պատրաստել տեղեկանքներ (ՀՀ դատական պրակտիկան, իրավակիրառ պրակտիկան, ՄԻԵԿ և այլ միջազգային պրակտիկան, համեմատական իրավական վերլուծություններ)
- Աջակցել այլ փաստաբաններին նրանց վարույթների գործերում առկա քրեական իրավունքի հարցերով

### ԱՆՀՐԱԺԵՇ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

- Իրավաբանության բակալավրի աստիճան (պարտադիր է), մագիստրոսի աստիճանը առավելություն է.
- Փաստաբանի արտոնագիր.

- Քրեական օրենսդրության և դատավարության լիարժեք իմացություն.
- Գերազանց համակարգչային գիտելիքներ՝ MS Office և G Suite, հայկական և արտասահմանյան իրավաբանական ռեսուրսների, Ինտերնետի և էլ.փոստի իմացություն.
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն. Ռուսերենի, անգլերենի և այլ լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն /ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն, արաբերեն, վրացերեն և այլն/.
- Կազմակերպված, սթերսակայուն, ճշտապահ և կարգապահ, թիմում, այդ այլ անձանց ենթակայությամբ (թիմի ղեկավարի) աշխատելու հմտություն.
- Աշխատանքային ժամանակը կազմակերպելու հմտություն, աշխատանքի բարձր արդյունավետություն:
- Բարձր էթիկական ստանդարտներին հետևելու պատրաստակամություն, կոնֆիդենցիալության ապահովման և շահերի բախման բացառման կանոններին հստակ հետևելու պատրաստակամություն:

## **ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ/ԱՇԽԱՏԱՎԱՐՉԸ**

Հարցազրույցի արդյունքներով

**ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ.** Շահագրգիռ թեկնածուները կարող են ուղարկել իրենց CV [career@dialog.am](mailto:career@dialog.am) հասցեով՝ հաղորդագրության թեմային վերաբերող տողում նշելով “Քրեական գործերով փաստաբան”: Կապ կհաստատվի միայն հարցազրույցի համար ընտրվածների հետ:

Ձեր դիմում-նամակի մեջ խնդրում ենք հստակ նշել, որ աշխատանքի այս հնարավորության մասին իմացել էք Փաստաբանների պալատի միջոցով:

**ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՍԿՍԱԾ 13.06.2019 թվականից**

**ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 01.07.2019թ. (CV-ներ կդիտարկվեն ստանալուն զուգահեռ)**

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝** “Կոնցեռն-Դիալոգ” ՓԲԸ փաստաբանական ընկերություն է, որը տրամադրում է պրակտիկորեն բոլոր տեսակների իրավաբանական ծառայություններ: Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք [www.dialog.am](http://www.dialog.am) կայքը: